— Ոհ, սիրելի մայր իմ, ցաւում եմ սաստիկ,
Զարդն է թշնամի մեր կանանց սեռին.
Միթէ չէ՞ք տեսած պատկեր մեր Փրկչին,
Որ չունի մի զարդ իւր վերայ հագած,

Դուստր իմ աննման, զուր է քո խօսքեր,
Ո՞վ կայ աշխարհումս որ զարդ չըսիրէ.
Զարդ է գեղեցիկ մարդկային ազգի,
Դու չես լինելոյ կոյս ապաշխարող.
— Ա՛յ ապաշխարող, այլ ցանկամ գիտնալ,
Թէ ի՞նչ է արևն կամ ի՞նչ է լուսին,
Ի՞նչ են անհամար աստղեր լուսափայլ,
Եւ ի՞նչ ձիւն, անձրև, կարկուտ, ցող, եղեամ.

Սիրելի աղջիկս, միթէ չե՞ս տեսնում այդ ամեն աչքովդ,
Այդ ի՞նչ է՝ որ մարդ ցանկայ իմանալ,
Դու չես գառնալու գիտուն աստղաբաշխ,
Ի՞նչ օգուտ քննել անօգուտ բաներ.
— Մայր իմ, չեմ սիրում հագուստ թանկագին,
Որ շուտ է մաշվում իմ մարմնոյս վերայ.
Սիրում եմ ուսմունք զանազան տեսակ,
Որ չունի երբէք հնանալ մաշվել.

Հագի՛ր սիրելի, թող հիններն մաշվին,
Պատրաստ եմ առնուլ ամեն ժամանակ,
Ահա առած եմ քեզ մի լաւ թիկնոց,
Որ քո ընկերներ չունին այնպէս բան.
— Ոչ երբէք մայր իմ, թող ես չունենամ,
Որ իմ ընկերներ ինձ գովեն ի զուր.
Թող ես սովորիմ ի՞նչ է ծով, ցամաք,
Եւ ի՞նչ կղզի, գետ, ի՞նչ է սար ու ձոր,

Դոքա ի՞նչ օգուտ քո փափուկ մտացդ,
Դու չես գառնալու գիտուն ուսուցիչ,
Դու պէտք է լինիս մի կին ինձ նման,
Հարկաւ կունենաս հարուստ ամուսին.
— Ոհ, առաջ, մայր իմ, կլինիմ գիտուն,
Որ գիտուններին ես ընկերանամ.
Ամեն ուսուցչաց լինիմ հաւասար,
Ուսեալ մայր գառնամ ապագայ որդւոցս.

Այդ ի՞նչ է որդեակ, այդ ի՞նչ նոր խօսքեր,
Երբէք չեմ լսած այնպէս հանարձակ,
Մի գուսար հարազատ տայ մեր պատասխան,
Այդ բոլորովին մոռցաս հակառակ.

— Միթէ չտեսար մեր այն թատրոնումը,
Այն համեստաշարժ շքեղ օրիորդն,
Որ մարդկանց միջին կանգնած համարձակ,
Փայլումէր նորա մտաց ցոլմունքներ.

Ես չեմ կամենում գովել այն ծնողքը,
Որ իւր աղջկերանց տալիս են դպրոց.
Անօգուտ ուսմանց լինել խեղճ գերի,
Միթէ չե՞ս տեսնում մեր մօտ դրացին.
— Բայց շատ տիղ է նորա խաւար միտքը,
Զի ես չունիմ կամք լինել զարդասէր,
Ես ցանկամ գիտնալ զանազան ուսմունք,
Թէ ի՞նչ են թռչունք անասունք երկրի.

Բաւ է որդեակդ իմ, հերիք դէմ խօսիս,
Այդ նոր նոր խօսքեր պահի՛ր քեզ համար,
Մի՛ խորացներ քո մօր ուրախ սիրտը,
Որ դու ես միայն մխիթար սրտիս.
— Կը հնազանդիմ մայր իմ սիրելի,
Թիկնոցդ հագնելովս կատարեմ հրամանդ,
Բայց առ ինձ համար զանազան գրքեր,
Սրանցով փոքր ինչ միտքս էլ զարդարուի.

Այո՛ որդեակդ իմ, հոգւոյս իմ հաճոր,
Եւ ես կըգնեմ զանազան գրքեր,
Ապա սովորիս պէս պէս ուսմունքներ,
Ուսեալ մայր դառնաս ապագայ որդւոցդ.
— Ուրեմն ո՛վ մայր իմ, սիրեցիք այժմ ինձ՝
Դստրիկդ հարազատ՝ որ ձեզ կյարգէ,
Զի լինիք պատճառ իմ երջանկութեանս՝
Կացուցանելովդ զիս ձեզ շնորհապարտ.

ՕՐ. ԱՇԽԷՆ ՓԱՓԱԶԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ.

Ի 25ն ամսոյս Վ. Հափառ և Արբազնագոյն Հայրապետ ամենայն Հայոց ի Երուսաղեմ վերադարձաւ այսր ի Ս. Էջմիածին։

ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ըստ հրամանի Վ. Հ. Հայրապետի Ատրախանայ Վիճակին Առաջնորդ Գեր. Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետանց ի 12ն ամսոյս եկաւ այսր ի Ս. Էջմիածին։

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Արցախոյ Վիճակին Առաջնորդ Գեր. Սարգիս Արքեպիսկոպոս Հ. Ջալալեանց՝ — որ անձնական տկարութիւնը կազդուրելոյ համար գնացած էր ի Տփխիս և անտի ՅԵպատեռման, — ի 28ն ամսոյս եկաւ ի Ս. Էջմիածին։

ՑԱԽԱԼՔԱԼԱԿԻ.

Խմբագրոթիւն Արարատ ամսագրոյ.

Արժան եմ համարում յայտնել խմբագրութեանդ, որ Օգոստոս ամսի վերջերում Տփխեաց թեմի ուսումնարանների Թեմական Վերատեսուչ Ստեփաննոս քահանայ Տէր Ստեփաննոսեանցը իւր պաշտօնով ժամանեց Ախլքալակ՝ գաւառիս Հոգևոր ուսումնարանների բարեկարգութեանց համար։

Բարեկրօն քահանայն իւր վառվռուն բնաւորութեամբ՝ ամենայն կարելի միջոց գործ դնելով՝ ջերմ սիրով աշխատումէ յառաջ տանել հասարակաց Հօր — Ազգասէր Գէորգ Վեհափառ Հայրապետի ազնիւ բաղձանքը և սուրբ կամքը՝ հաստատելու համար գաւառումս տարրական ուսումնարաններ՝ տեղւոյս ուսումնակարօտ զիւղական Հայ մանուկների համար։

Քահանայ վերատեսուչը իւր գալստեան երրորդ օրը իսկոյն ճանապարհորդեց դէպի Վիճակիս զիւղաքաղաքը և նշանակեց բացուելիք կեղրոնական ուսումնարանների համար յարմարաւոր տեղերը՝ որ իւրաքանչիւր Շինական հասարակութեան մէջ, որը բաղկանում է 10 կամ 15 զիւղերից, շինուի գոնէ մի կեղրոնական Ուսումնարան, ո՛ր զիւղում որ յարմար լինէր երթևեկ աշակերտաց զիւրութեան համար։

Ուրախութեամբ սրտի յայտնում եմ, որ մի քանի զիւղական հասարակութեանց մէջ սիրալիր ընդունելութիւն է գտած Ստեփաննոս Քահանայի յորդորական խօսքերը ուսումնարանների բացման մասին, զիւղացիներից շատերը օգնորուել են նորա համոզական աղդու խօսքերից։ Սակայն զիւղի հասարակութիւնը ստորագրութիւն բաց անելով իւր մէջ մի ժամում առձեռն այնքան կամաւոր նուէր է հաւաքել, որ բաւական է կազմած իւրեանց ուսումնարանի ներքին շինութեանց և կազմակերպութեան համար։ Ուսուցչաց ռոճկի մասին նոյն վերատեսչի խորհրդով հասարակական վճիռ է կայացուել իւրաքանչիւր տան պարտաւորել երկու Կօղ ցորեան վճարը։

Սուլտա զիւղի անուանի Թորոս աղայ Հարուստ քէհեան խոստացել է իւր սեփական ծախքով շինել մի շքեղ ուսումնարան իւրեանց զիւղում։ Մի ուսումնարան ևս խոստացել է շինել իւր ծախքով Նամդարայ զիւղի տիրացու Գրիգոր Զօրապետեանը միայն այն պայմանաւ՝ եթէ կեղրոնական ուսումնարանը նոյն Շինական հասարակութիւն բարեհաճեն իւրեանց զիւղում բաց անել։

Չենք կարող չը յիշել և այն, որ մի քանի զիւղօրէից հասարակութիւնք չեն համաձայնում կեղրոնական ուսումնարաններ բաց անել՝ պատճառելով զիւղերի միմեանցից հեռու լինելը և ձմեռուայ ցուրտ եղանակներում երթևեկութեանց դժուարութիւնքը աշակերտների համար։ Այդ հանդամանքում լաւ կը լինէր՝ եթէ երթևեկ աշակերտաց ծնողք համաձայնէին գոնէ ձմեռուայ եղանակում տեղաւորել իւրեանց որդիքը այն զիւղերի գերդաստանների մէջ՝ ուր բացուելու էր կեղրոնական ուսումնարանները և այդ դժուար չէր նոցա կատարելը։

Այդ ընդդիմացող հասարակութիւնք չընայելով իւրեանց անկարողութեանը կամենում են իւրաքանչիւրը իւրեանց զիւղում առանձին անկախ ուսումնարաններ ունենալ իւրեանց տէր ուսուցիչների կառավարութեան ներքև։ Նոքա չեն